ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 110 14 դեկտեմբերի 2011թ.

ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանին հատկացված պահպանման ծախսերի տնտեսագիտական դասակարգման N 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով ու <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով մարզի սոցիալապես խիստ կարիքավոր 78(յոթանասունութ) քաղաքացիների դիմումները

որոշում եմ՝

1. Հատկացնել դրամական օգնություն՝ գումարով 2000000(երկու միլիոն)դրամ մարզի սոցիալապես խիստ կարիքավոր յոթանասունութ քաղաքացիների՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ. Հայրապետյանին՝ սահմանված կարգով կատարել վճարումը:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ